Հայաստանի կուսակցությունների ձևավորումը անկախության վերականգնման գործընթացի համատեքստում

ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Երևանի պետական համալսարան

Անկախության վերականգնման գործընթացը, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման խնդրի հետ համատեղ առաջին լուրջ քաղաքական հիմնախնդիրն էր, որին բախվեցին հայաստանյան կուսակցությունները: Հոդվածում դիտարկվում է Հայաստանում բազմակուսակցական համակարգի ձևավորումն այդ գործընթացի համատեքստում: Դրանում ներգրավված հայաստանյան կուսակցությունների սկզբունքային տարակարծությունների առաջին լուրջ դրսևորումը կապված էր թե՛ Հայաստանի անկախության վերականգնման գործընթացի ուղու, թե՛ դրա ժամկետների, թե՛ միջոցների ընտրության հետ: Անվերապահորեն ձգտելով անկախությանը՝ գործընթացն առաջ տանելու համար Հայաստանի կուսակցությունները հակոտնյա ճանապարհային քարտեզներ էին առաջարկում: Եվ այդ տարակարծություններից էլ ծնվում էր միջկուսակցական գաղափարական մի բանավեճ, որը քննելու խնդիր է իր առաջ դնում սույն հոդվածը՝ ներկայացնելով անկախության նկատմամբ կուսակցությունների մոտեցումները: Անկախության գործընթացում կուսակցությունների դերի ու նրանց միջև ընթացած պայքարի բացահայտման հիմնախնդիրը կարևորվում է ինչպես Երրորդ Հանրապետության պատմության ուսումնասիրության, այնպես էլ Հայաստանում բազմա-կուսակցական համակարգի ձևավորման տեսնակյունից: Անկախության հանրաքվեի մոտենալուն զուգահեռ հայաստանյան քաղաքական ուժերի մոտեցումները բյուրեղացան՝ ձգտելով միմյանց, և, ի վերջո, սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեին ընդառաջ բոլոր կուսակցությունները եկան ընդհանուր հայտարարի:

Բանալի բառեր
անկախություն, Հայաստանի Հանրապետություն, պետականություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, ԽՍՀՄ փլուզում

Նախաբան

Հայաստանի անկախության հիմնահարցը հայաստանյան քաղաքականության օրակարգի առանցքային բաղադրիչ դարձավ ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին՝ մասնավորապես 1988թ. մեկնարկած համազգային զարթոնքի շրջանում: Անշուշտ, անկախության գաղափարը ինստիտուցիոնալ դրսևորում էր ստացել դեռևս 1960-

ականներից, ինչի ամենածանրակշիռ դրսևորումն էր 1967թ. ընդհատակյա Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը (ԱՄԿ)՝ համախմբելով Հայաստանի անկախության գաղափարը իրականություն դարձնելու նպատակադրում ունեցող մի խումբ նվիրյալների[1]: Անհնար է թերագնահատել ԱՄԿ-ի ու նույն գաղափարները հետապնդող գաղտնի խմբակների, միավորումների, քաղաքական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը: Ավելին, ԱՄԿ-ի ազդեցությունը նկատելի էր նաև Հայաստանի անկախության վերականգնումից հետո: Հայաստանի Հանրապետական Կուսակցության (ՀՀԿ) հիմնադիրն ու մինչև 1997թ. նախագահը՝ Աշոտ Նավասարդյանն, ու նրանից հետո 10 տարի կուսակցությունը գլխավորած Անդրանիկ Մարգարյանը ԱՄԿ ղեկավար կազմում են եղել, իսկ ՀՀԿ ղեկավար մարմինների որոշ անդամներ խորհրդային տարիներին անդամակցել են այդ ընդհատակյա կուսակցությանը: ԱՄԿ անդամները՝ հատկապես ղեկավար կազմը, ենթարկվում էին ԽՍՀՄ հատուկ ծառայությունների ծանր հարվածներին՝ շինծու դատավարություններ, աքսոր, բանտարկություններ, սակայն անկախության գաղափարը աստիճանաբար համակում էր հասարակության նորանոր շերտերի: Արդեն 1990թ., երբ Հայաստանում իշխանության գլուխ անցան ժողովրդավարական ուժերը, անկախությունը վերջնականապես դարձավ քաղաքական օրակարգի կենտրոնական հարցը: Հանրապետության բոլոր խնդիրների նկատմամբ այն օրինաչափորեն ձեռք բերեց գերակայող կարգավիճակ[2]:

Հարկ է փաստել, որ Հայաստանի անկախության գաղափարն ինստիտուցիոնալ մակարդակով սկսել է հրապարակավ շրջանառվել 1989թ. նոյեմբերի 7-ին կայացած ՀՀՇ հիմնադիր համագումարում՝ դառնալով կուսակցության ծրագրի մաս: Թեև առանձին քաղաքական կազմակերպություններ՝ Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ), ՀՀԿ, Սահմանադրական իրավունք միություն (ՍԻՄ), մինչ այդ էլ արծարծում էին անկախության պահանջը, սակայն համաժողովրդական շարժումը մինչ այդ ընթանում էր Արցախի ու Հայաստանի

---

[1] **Հարությունյան Վ.**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, Վան Արյան, 2014թ.:

[2] *Հայաստանի Հանրապետություն*, 14 մարտի, 1991թ.:

վերամիավորման խնդրի լուծման ուղղությամբ՝ ԽՍՀՄ վարչաքաղաքական ազդեցության տիրույթում: 1990թ. ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի վերջին ընտրությունների արդյունքում խորհրդարան անցան զգալի թվով թեկնածուներ, որոնք քաղաքական ասպարեզ էին եկել արցախյան շարժման շնորհիվ և չէին համակրում կոմունիստական իշխանություններին: Արդյունքում խորհրդային իշխանության վերացումը Հայաստանում տեղի ունեցավ խաղաղ թավշյա «հեղափոխությամբ»՝ կոմունիստները խորհրդարանում կորցրեցին մեծամասնությունը: Կոմկուսի և ՀՀՇ-ի ղեկավար կազմերի ողջախոհության արդյունքում Հայաստանը հաջողությամբ խուսափեց ներքին ճակատագրական ընդհարումներից[3], ինչը չհաջողվեց Հարավային Կովկասի մյուս հանրապետություններում՝ Վրաստանում ու Ադրբեջանում: Այդ երկրներում կենտրոնական բարդությունն առնչվում էր կոմունիստների՝ իշխանությունից հրաժարվելու անկարողությանն ու այն ամեն գնով պահպանելու ձգտմանը: Ի տարբերություն նրանց՝ Հայաստանում արցախյան համաժողովրդական հզոր ալիքի ազդեցության ներքո իշխող Կոմունիստական կուսակցությունը (Կոմկուս) իշխանությունն անարյուն փոխանցեց ՀՀՇ-ին, իսկ վերջինս էլ ստանձնեց պատասխանատվությունը՝ խուսափելով անձնական հաշվեհարդարից:

Միջկուսակցական բանավեճ և կոնսենսուս

Արցախյան շարժման խթանմամբ Հայաստանում ձևավորված հիմնական քաղաքական ուժերը, մասնավորապես՝ ՀՀՇ, ԱԻՄ, ՀՀԿ և այլն, անվարան ձգտում էին անկախության: Այդ հանգամանքը կարելի է նաև բացատրել նրանց ղեկավար կազմերի ներկայացուցիչների՝ ընդհատակյա քաղաքական պայքարի փորձով, 1988-90թթ. շարժմանը մասնակցությամբ և այլն: Նրանց համար այլևս ակնհայտ էր, որ Միությունը զիջելու է դիրքերը, և հարցը վերաբերում էր միայն գործընթացի ձևին ու ժամանակին: Մինչդեռ հայկական սփյուռքում իրավիճակն այլ էր:

---

[3] **Լիպարիտյան Ժ.**, Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, Նաիրի, 1999թ., էջ 32:

Սփյուռքահայ քաղաքական կազմակերպությունների (ավանդական կուսակցությունների) վերաբերմունքը Հայաստանում սկսված շարժման հանդեպ միանշանակ չի եղել: Այդուհանդերձ, Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություններն աննախադեպ միասնական դիրքորոշում արտահայտեցին 1988թ. հոկտեմբերին, հանդես գալով երեք կազմակերությունների համատեղ կոչ-հորդորով՝ որպես արձագանք Հայաստանում ծավալվող իրադարձություններին: Այդ հայտարարությամբ երեք քաղաքական կազմակերպությունները Խորհրդային Հայաստանի իշխանություններից պահանջում էին առաջնային դարձնել ԼՂ-ի հարցը և ձեռնամուխ լինել դրա արդարացի լուծմանը: Միաժամանակ սփյուռքի կուսակցությունները կոչ էին անում Հայաստանի ու Արցախի ժողովուրդներին խուսափել ծայրահեղական այնպիսի քայլերից, ինչպիսիք էին գործադուլները, դասադուլները և այլն, որոնք խափանում էին ներհայաստանյան կարգուկանոնը, տնտեսության, արդյունաբերության, կրթության և մշակութային կյանքի բնականոն ընթացքը: Ամեն ինչից վեր դասելով հայ ժողովրդի հավաքական միաբանությունը՝ կուսակցությունները շեշտում էին վճռականությամբ և հեռատեսությամբ ազգային շահերի պաշտպանության կարևորությունը[4]: Այս կոչը բացահայտեց, որ սփյուռքյան կազմակերպությունները շարժման սկզբնական փուլում թյուր ըմբռնում էին դրսևորում ներհայաստանյան իրադարձությունների նկատմամբ: Հոգեբանական այդպիսի ըմբռնումը գերակա եղավ նաև 1991թ. անկախության հռչակման օրերին՝ դրսևորվելով ՀՀՇ-ի ու ՀՅԴ-ի գաղափարական հակադրությամբ:

Մինչ այդ, 1990թ. մայիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում գերակշռություն ստացավ ՀՀՇ, որի առաջնորդներից Լ. Տեր-Պետրոսյանը 1990թ. օգոստոսի 4-ին ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ, իսկ Վազգեն Մանուկյանը՝ 1990թ. օգոստոսի 13-ին՝ ՀՀ Մինիստրների խորհրդի նախագահ: Իշխանության այսպիսի փոփոխությունից ընդամենը օրեր անց ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց անկախության մասին հռչակագիրը:

---

[4] *Դրօշակ*, թիվ 13, 12 հոկտեմբերի, 1988թ.:

Դեռ 1990թ. օգոստոսի 4-ին ընդունված որոշմամբ ՀԽՍՀ ԳԽ-ն ստեղծեց Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15 հոգուց բաղկացած հանձնաժողով[5]: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին մասնակցող ուժերը, ինչպես՝ ՀԿԿ, ՍԻՄ, ՀՀԿ և այլն, շտապեցին ԳԽ-ի հանձնաժողովին ներկայացնել իրենց առաջարկները, իսկ արդեն օգոստոսի 20-ին ԳԽ դատին հանձնվեց հանձնաժողովի միասնական տարբերակը[6]:

Ավելի քան քառորդ դար անց կարելի է պնդել, որ ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից ՀՀ անկախության մասին հռչակագրում ներառված ցանկացած հիմնահարցի և նույնիսկ բառի ընտրությունը լրջորեն կշռադատված էր: Դա միանգամայն համահունչ էր համաշխարհային փորձին, որի ամենահաջող օրինակը, թերևս, ԱՄՆ անկախության հռչակագիրն է[7]: Այն հաճախ հիմք է դարձել անկախության հռչակագրեր ընդունող մյուս ազգերի ու պետությունների՝ աշխարհին հղված ուղերձի համար՝ որպես այլ պետությունների կողքին հավասար տեղ զբաղեցնելու հայտ[8]: Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման ժամանակ առանձնահատուկ ուշադրության արժանացավ Հայոց ցեղասպանության հիմնահարցը: Քաղաքական սկզբունքներից ելնելով՝ այն փաստաթղթում ընդգրկելու դեմ հանդես եկավ ՀՀՇ-ն՝ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Այդուամենայնիվ, Հ. Սիմոնյանի կարևոր դերակատարությամբ մի խումբ պատգամավորներ պնդեցին այդ պատմական փաստաթղթում Հայոց ցեղասպանության փաստի հիշատակման անհրաժեշտությունը: Ի վերջո, փոխհամաձայնության միջոցով վճռվեց անկախության հռչակագրի առանցքային բաղադրիչներից մեկը դարձնել Հայոց ցեղասպանությանն առնչվող դրույթը[9]:

---

[5] *Հայաստանի Հանրապետություն*, 9 հոկտեմբերի, 1990թ.:

[6] **Պողոսյան Է.**, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013, էջ 31:

[7] **Maier P.**, American Scripture: Making the Declaration of Independence, Vintage, 1998.

[8] **Armitage D.**, The Declaration of Independence, Harward University Press, 2008, p. 64.

[9] **Մինասյան Է.**, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013թ., էջ 116:

1990թ. օգոստոսի 23-ին 187 պատգամավորներից 183-ի հավանությամբ ընդունվեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի տեքստը: Վերջնական խմբագրումներից հետո օգոստոսի 24-ին նոր քվեարկությամբ (192 կողմ և 2 ձեռնպահ) ընդունվեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը[10]: Հռչակագրի կարևորագույն դրույթներից մեկը վերաբերում էր ԽՍՀՄ օրենքների կիրառելիությանը: Շեշտվում էր, որ ԽՍՀՄ այն օրենքները, որոնք չէին հաստատվել ՀՀ Գերագույն Խորհրդում, Հայաստանում կիրառվել չէին կարող: Գերագույն խորհուրդն արդեն 1 տարի անց հարցը դրեց համաժողովրդական հանրաքվեի:

Լիովին ակնկալելի էր Անկախության հռչակագրի ընդունումից հետո Հայաստանի նկատմամբ ԽՍՀՄ ղեկավարության ճնշումների ուժգնացումը: Դրանք ընդգրկում էին գրեթե բոլոր ոլորտները՝ իրավական, քաղաքական, տնտեսական և այլն: Այդ շարքում կարելի է դիտարկել նաև 1990թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի ստորագրած օրենքը, որով նոր ընթացակարգ էր սահմանվում հանրապետությունների անկախացման համար[11]: Դա, սակայն, չխանգարեց, որ Լիտվան «ցուցադրաբար հռչակեր հանրապետության անկախությունը» դրա իսկ նախօրյակին[12]: Ի դեպ, ԽՍՀՄ անդամ պետությունների հնարավոր անկախությունների կասեցմանն ուղղված քայլ կարելի է համարել նաև 1991թ. հունվարի 16-ին ԽՍՀՄ ԳԽ-ի որոշումը՝ նույն թվականի մարտի 17-ին ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին[13]: Պարադոքսալ կարող է թվալ, սակայն Հայաստանի Հանրապետության անկախության ձեռք բերման հարցում նշանակություն ունեցավ նաև ԽՍՀՄ ղեկավարության այդ որոշումը: Վերջինս ակամայից օրակարգի հարց դարձրեց ՀՀ անկախության հնարավորությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ մինչ այդ անկախության հանրաքվեի անցկացման շուրջ քննարկումները գործնական ընթացք չէին ստանում: Հիշարժան է

---

[10] *Խորհրդային Հայաստան,* 26 օգոստոսի, 1990թ.:

[11] *Известия советов Народных депутатов СССР,* апрель 7, 1990.

[12] **Gorbachev M.**, On my Country and the World, Columbia University Press, 2000, p. 101.

[13] *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր*, 2, (982), 31.01.1991թ., էջ 52:

իշխող ՀՀՇ-ի մոտեցումը միութենական հանրաքվեի նկատմամբ, ըստ որի՝ այն սոսկ խորհրդային կենտրոնական իշխանությունների դիրքերի ամրապնդմանը միտված քայլ էր՝ առանց իրերի իրական դրությունը փոխելու որևէ շանսի[14]:

1991թ. մարտի 1-ին կայացված որոշմամբ Հայաստանի տարածքում վերոնշյալ հանրաքվեն չէր անցկացվելու՝ հղում անելով հանրաքվեի՝ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասելու փաստին: ՀՀ ԳԽ որոշմամբ՝ ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքները ՀՀ-ի համար իրավական ուժ ունենալ չէին կարող[15]: Դրա փոխարեն ՀՀ ԳԽ-ն միաժամանակ ընդունեց մեկ այլ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: Այն նախատեսում էր հանրաքվեն անցկացնել 1991թ. սեպտեմբերի 21-ին՝ միաժամանակ ԳԽ նախագահությանն իրավունք վերապահելով իրադրության կտրուկ փոփոխության պարագայում հանրաքվեն անցկացնել ավելի վաղ[16]: Կարևոր էր, որ անկախության հռչակումը նախատեսվում էր իրականացնել ԽՍՀՄ օրենքներով՝ հնարավորություն ընձեռելով թե՛ գործընթացի իրավական համապատասխանության ապահովման, թե՛ հայաստանյան հասարակական-քաղաքական կազմակերպությունների քարոզչական աշխատանքի արդյունավետության երաշխավորման համար: ՀՀՇ-ն ու անկախության հարցում նրան աջակցող քաղաքական ուժերը նկատի էին առնում պատահականություններից զերծ մնալու անհրաժեշտությունը՝ առանձնացնելով պետության, քաղաքական կազմակերպությունների և հատկապես ժողովրդի անպատրաստությունը հաղթահարելու հրատապությունը[17]:

Ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, Հայաստանում նույնպես գործում էր կուսակցական փոշիացած համակարգ, որի դեպքում առկա շատ քաղաքական կազմակերպություններից և ոչ մեկը մյուսի հանդեպ նկատելի գերակայություն

---

[14] *Аргументы и факты*, 14, 1991.

[15] *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր*, 5 (985), 15.03.1991թ., էջ 3:

[16] Նույն տեղում, էջ 4

[17] **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006թ., էջ 176-177:

չուներ[18]: Հայաստանյան կուսակցություններն անկախության նկատմամբ իրենց դիրքորոշմամբ պայմանականորեն կարող են բաժանվել երեք տարբեր խմբերի: Առաջին՝ արմատական անկախականների, խմբում կարելի է ընդգրկել ԱԻՄ-ը, ՀՀԿ-ն, ՍԻՄ-ը: Նրանք ամեն ինչից վեր էին դասում անկախության գաղափարը՝ շուտափույթ դրան հասնելու նպատակադրությամբ: Քաղաքական այս հոսանքն անկախության նվաճմամբ էր պայմանավորում Հայաստանի ապագան: Երկրորդ խումբն իրեն հռչակում էր «առավել չափավոր անկախական», որ գերազանցապես ներկայանում էր Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությամբ: Իր ծրագրում մշտապես ունենալով անկախության հրամայականը՝ ՀՅԴ-ն առավել մեծ նշանակություն էր տալիս «Միացյալ Հայաստանի» գաղափարին, որտեղից էլ բխում էր պահանջատիրության հիմնահարցը: ՀՅԴ-ն գտնում էր, որ անկախ Հայաստան չէր կարող հռչակվել առանց Արցախի, հայ ժողովրդից բռնազավթված մյուս տարածքների: Այդ պատճառով ՀՅԴ-ն համազգային իղձերի իրականացումն առնչակցում էր իր՝ «Ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» բանաձևին[19]: Երրորդ խումբը ղեկավարում էր ՀՀՇ-ն, որն «անկախության երազանքի» իրագործմանը վերաբերվում էր «սառնասրտորեն՝ առանց զգացմունքայնության»: Կուսակցությունը գտնում էր, որ կտրուկ ու անհավասարակշիռ քայլերն անխուսափելիորեն վտանգելու էին անկախության հասնելու գործընթացը[20] և առաջարկում էր անկախության գնալ առանց միութենական իշխանությունների հետ ուղղակի առճակատման[21]: Այդ տեսակետը հակադրվում էր առաջին հերթին ԱԻՄ-ի մոտեցումներին, ինչը դրսևորվեց Հայաստանի անկախության հանրաքվեի նշանակման հարցում:

Նախ հարկ է նկատել, որ, ձգտելով իրավականորեն չեզոքացնել ԽՍՀՄ Սահմանադրության՝ հանրապետությունների անկախության

---

[18] **Sartori G.**, Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR Press, 2005, p. 110-111.

[19] *Երկիր*, 20 սեպտեմբերի, 1991թ.:

[20] *Հայաստանի Հանրապետություն*, 14 մարտի, 1991թ.:

[21] *Аргументы и факты*, 14, 1991.

իրավունքի մասին 72-րդ հոդվածը[22], գորբաչովյան վերոհիշյալ օրենքը նախատեսում էր, որ անկախության հարցով համաժողովրդական հանրաքվեն անցկացվեր Գերագույն խորհրդի ընդունած որոշումից ոչ շուտ, քան 6 ամիս հետո: Իսկ ահա նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում էր, որ հանրապետությունները միությունից դուրս գալու համար պետք է հետևեին մի գործընթացի, որի տևողությունը՝ հանրաքվեից հետո, պետք է լիներ 5 տարի: ՀՀՇ-ն առաջարկում էր անկախության գնալ ԽՍՀՄ օրենքի դրույթներից չշեղվելով, ուստի և ենթադրում էր անկախության հարցով հանրաքվեն անցկացնել սեպտեմբեր ամսին: ՀՀՇ-ն ակնկալում էր, որ այդու ԽՍՀՄ ղեկավարությունը հանրաքվեի դրական արդյունքի պարագայում պարտավորված էր լինելու ենթարկվել սեփական օրենքին և ճանաչել իր կազմից դուրս եկող հանրապետության իրավական նոր կարգավիճակը[23]: Հատկանշական է, որ Կոմկուսը նույնպես աջակցում էր հանրաքվեի այդ առաջարկին, քանզի ակնհայտորեն սպասողական դրության մեջ էր՝ հաշվի առնելով ողջ երկրում տեղի ունեցող գործընթացները, հատկապես՝ Միության ապագայի հանդեպ բոլորին համակած անորոշությունը[24]: Ի հեճուկս սրա՝ ԱԻՄ-ը պնդում էր շուտափույթ հանրաքվե անցկացնելու տեսակետը, իսկ ԳԽ անկախ մի շարք պատգամավորներ առաջարկում էին հանրաքվեն նշանակել 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին: Այս տարբերակի կողմնակիցները նկատի էին առնում ԽՍՀՄ-ում իրադարձությունների զարգացման շեշտակի արագությունը, ընդհանուր իրադարձությունների զարգացման ընթացքից դուրս մնալու վտանգավորությունը[25]:

Հասկանալով, որ անկախությունների առաջ արհեստական խոչընդոտներ դնելու մարտավարությունը հեշտությամբ ձախողվելու է, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները որոշեցին նոր միութենական պայմանագիր առաջարկել անդամ հանրապետություններին:

---

[22] Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик, Ташкент, 1978, с. 63.

[23] **Մանուկյան Վ.**, Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Երևան, 2002թ., էջ 109:

[24] *Հայք*, 5 մարտի, 1991թ.:

[25] *Հայաստանի Հանրապետություն*, 14 մարտի, 1991թ.:

Նախաձեռնությունը, թվում էր, պիտի փրկեր Խորհրդային միությունը վերջնական փլուզումից։ Դրան էր միտված 1991թ. հունիսի 18-ին ԽՍՀՄ իշխանությունների ներկայացրած 26 կետանոց նախագծի՝ «Դաշնագիր ինքնիշխան պետությունների մասին» հրապարակումը[26]: Այստեղ կրկին դրսևորվեցին հայաստանյան կուսակցությունների տարաձայնությունները։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը համառորեն հրաժարվում էր միանալ անկախականների նախաձեռնություններին, պնդում էր նոր միութենական պայմանագրի ստորագրման անհրաժեշտությունը։ Ի դեպ, նման դիրքորոշում էր արտահայտում նաև Հայ հեղափոխական դաշնակցությունը, որի տեսակետը լայնորեն արտահայտվում էր կուսակցության պաշտոնական մամուլում, որտեղ քննադատվում էր անկախության հասնելու հարցում ՀՀՇ-ի քայլերի շտապողականությունը[27]:

ՀՀՇ-ն լուրջ վերապահումներ ուներ նոր միութենական պայմանագրի կնքման նկատմամբ։ Ըստ Էդուարդ Եգորյանի, դրան միանալով՝ Հայաստանը վերածվելու էր նոր միության կցորդի, իսկ անկախությունը դրա արդյունքում մնալու էր իբրև անհեռանկարային խաբկանք[28]: Առհասարակ, ՀՀՇ-ն արհեստական էր համարում անկախության հանրաքվեի ու նոր միութենական պայմանագրի փոխկապակցումը՝ հաշվի առնելով վերջինի շուրջ ծավալվող անհամաձայնությունների ու անորոշությունների տարափը։ Միութենական քննարկումներում Հայաստանի դիրքերի ամրապնդումը, ՀՀՇ-ի կարծիքով, իրականանալի էր միայն «այո»-ի վճռական հաղթանակով՝ ավելի ինքնիշխան ու ազատ կարգավիճակով օժտելով Հանրապետությունը[29]:

Դեռևս չպառակտված՝ ՀԿԿ-ն լուրջ դիմադրություն էր ցույց տալիս ՀՀՇ-ի այս քաղաքականությանը՝ ձգտելով հասնել նրան, որ հայաստանյան բոլոր քաղաքական ուժերը ընդհանուր համաձայնությամբ սատարեին նոր միութենական պայմանագրի ստորագրման գաղափարը։ Թիկունքում մի հզոր ուժի առկայության պայմաններում

---

[26] *Известия советов Народных депутатов СССР*, май 21, 1990.

[27] *Հայաստանի Հանրապետություն*, 13 հուլիսի, 1991թ.:

[28] *Հայք*, 3 հուլիսի, 1991թ.:

[29] Նույն տեղում:

միայն պատկերացնելով Հայաստանի գոյությունը՝ Կոմկուսն առանց թաքցնելու հայտարարում էր, որ Հայաստանը կարող է ապագա ունենալ միայն նորացված դաշնության կազմում[30]: ՀՀՇ-ի ընդդիմախոս կուսակցություններից մյուսը՝ ՀՅԴ-ն, նույնպես հակված էր կարծելու, որ ԽՍՀՄ-ը կարող էր մեծանշանակ դեր կատարել հայկական հարցի լուծման գործում[31]: Նման կարծիքի ձևավորման վրա էականորեն ազդել էին Հայաստանի Կոմկուսի ղեկավարության փոփոխությունից հետո արձանագրված տեղաշարժերը կուսակցության քաղաքակա-նության ու գաղափարախոսության մեջ: 1988թ. համաժողովրդական շարժման մեկնարկից ՀՅԴ-ն հանդես էր գալիս Հայաստանի խորհրդային իշխանությունների՝ ազգային ու քաղաքական իրավունքների պաշտպանությանը նպատակաուղղված ձեռնարկում-ների ջատագովությամբ[32]:

Իսկ ահա սփյուռքյան կուսակցություններից Հայաստանում գործունեությունը վերականգնած ՀՌԱԿ-ը չէր բացառում միութենական նոր պայմանագրին միանալու տարբերակը՝ ընդգծելով որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդես գալու անհրաժեշտությունը: Այս հարցում ՀՌԱԿ-ի ու ՀՀՇ-ի մոտեցումները կարծես նույնական էին[33]: Քանզի ՀՀՇ-ն Խորհրդային միության ապագան տեսնում էր միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անկախ պետությունների համագործակցության սկզբունքով[34]: Փաստացիորեն, առաջարկվում էր հորիզոնական հարաբերություն-ներով փոխկապակցված պետությունների մի ընդհանուր համակարգ, որտեղ որոշումներն ընդունվելու էին համաձայնության և հավասարության սկզբունքներով: Հետևաբար՝ միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակով նոր միութենական պայմանագրի մեջ ընդգրկվելու հարցը ՀՀՇ-ի համար ձեռք էր բերել սկզբունքային նշանակություն[35]:

---

[30] *Հայք*, 26 հունիսի, 1991թ.:

[31] *Երկիր*, 20 սեպտեմբերի, 1991թ.:

[32] **Հարությունյան Ս.**, Անցյալի և ներկայի մասին, Երևան, Նոյյան Տապան, 2011թ., էջ 209:

[33] *Հայաստանի Հանրապետություն*, 11 հուլիսի, 1991թ.:

[34] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 175:

[35] *Союз*, 12, 1991.

Քաղաքական հիմնական դերակատարներից ՀՅԴ-ն չէր հրաժարվում անկախության գաղափարից, սակայն համոզված էր, որ անկախ և ինքնուրույն Հայաստանը, տեսանելի ապագայում, պետք է գտնվեր ԽՍՀՄ նորացված համակարգում[36]: Նովո Օգարյովոյի հայտարարության ներքո ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ստորագորության փաստը ՀՅԴ-ն համարում էր ՀՀՇ-ի՝ իր տեսակետին հակվելու դրսևորում. «անկախություն՝ իրատես ուժերի իրատես գնահատականով»[37]: Անկախությանը՝ առանց «միացյալ Հայաստանի», ՀՅԴ-ն վերաբերվում էր վերապահումներով: Նման իրավիճակում նախընտրելով ԽՍՀՄ մատուցած բոլոր տհաճությունները՝ աշխարհա-քաղաքական այդ միավորի կազմում «միացյալ Հայաստանի» կերտումը ՀՅԴ-ն միանգամայն հնարավոր էր համարում: Ուստի և ողջունում էր վերոնշյալ հայտարարությունը՝ գտնելով, որ այն իր առաջարկած քաղաքականության տրամաբանության շրջանակներում էր[38]:

Այդուհանդերձ, Տեր-Պետրոսյանի մասնակցությունը 1991թ. հուլիսի 23-ին Նովո Օգարյովոյում կայացած ԽՍՀՄ անդամ երկրների ղեկավարների հանդիպմանը դիվանագիտական բարեկրթության այց էր, և ոչ ամենևին նոր միության կերտման մտահոգությամբ իրականացված գործնական քայլ[39]: ՀՀՇ-ն գտնում էր, որ միութենական պայմանագիրը խարսխված էր հանրապետությունների՝ արդեն իսկ ձեռք բերած ինքնիշխանության նվաճումներն արհամարհելու և զրոյական վիճակից նոր միութենական կարգ սահմանելու վրա[40]: Այս հարցում ՀՀՇ-ի տեսակետը լավագույնս ներկայացված է ԳԽ նախագահ Տեր-Պետրոսյանի հետևյալ դիտարկման մեջ. «Խորհրդային միությունը և՛ ներքին, և՛ արտաքին հանգամանքների բերումով պարտավոր է ենթարկվել հասարակության զարգացման համաշխարհային օրենքնե-րին, այսինքն՝ անկախ այն բանից, թե ինչպես կզարգանան իրադար-ձությունները, ինչպիսի ժամանակավոր նահանջներ տեղի կունենան,

---

[36] **Սարգսյան Ա.**, ՀՀՇ պատմությունը, ՄԱՍ II (հատուկ մաս), http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=79:2011-01-17-14-45-02&catid=53:2011-01-17-14-37-42&Itemid=66 (14.02.2017):

[37] *Ազատամարտ*, 18, 1991թ.:

[38] *Երկիր*, 20 սեպտեմբերի, 1991թ.:

[39] **Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 128:

[40] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ. 171-172:

միևնույն է՝ Միությունը վաղ թե ուշ պետք է քայքայվի: Ցանկալի և հնարավոր է, որ քայքայումը կատարվի բնական, անարյուն, քաղաքակիրթ ձևով, և Միությունը վերածվի ժողովուրդների մի համերաշխ համագործակցության, ինչպիսին է, օրինակ, եվրոպական երկրների համագործակցությունը»[41]:

1991թ. ամռանն իրադրությունը ԽՍՀՄ-ում այն աստիճանի էր լարվել, որ փոփոխությունները տեղի էին ունենում կայծակնային արագությամբ՝ յուրաքանչյուր վայրկյան վերանայվելու ներուժով: 1991թ. օգոստոսի 19-ին Միության կենսունակությանը հասցվեց վերջին հարվածը, որից ապաքինվել ԽՍՀՄ-ը այլևս չկարողացավ: 1991թ. օգոստոսի 18-ին «երկրում իրավիճակի կայունացման» պատճառաբանությամբ ստեղծվեց Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ), որի մեջ մտան ԽՍՀՄ բարձրագույն պաշտոնյաները՝ փոխնախագահ Գ. Յանաևի գլխավորությամբ՝ հայտարարելով պետության իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու որոշման մասին: Հետագայում Յանաևը խոստովանել է, որ ԱԴՊԿ-ի հիմնական նպատակն է եղել կանխել նոր միութենական պայմանագրի կնքումը, որը է՛լ ավելի էր թուլացնելու Միությունը[42]: Պետական իշխանության զավթումը այսօրինակ պալատական հեղաշրջման ճանապարհով ինքնին դրեց ԽՍՀՄ-ի վերջակետը, երբ 3 օր հետո Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը վերականգնեցին հասարակական կարգը՝ իշխանությանը վերադարձնելով ԽՍՀՄ օրինական նախագահ Միխայիլ Գորբաչովին: Արդյունքում, իշխանությունը մնաց մի մարդու ձեռքում, որը ԽՍՀՄ բաժանմանը դիմակայելու կամ այն կանխելու ձգտում չուներ[43]:

Խորհրդային պետության հոգեվարքի փուլում այս ճգնաժամային իրադարձությունը Հայաստանում ևս անհանգստություններ հարուցեց: Հատկանշական է, որ ՀՀՇ-ի դրսևորած զգուշավոր կեցվածքին քննադատաբար մոտեցան ընդդիմադիր կուսակցություն-

---

[41] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 174:

[42] **Геннадий Янаев**, Последнее интервью, 2011, https://www.youtube.com/watch?v=lZ13bB8JNuQ (18.02.2017).

[43] **Hough J.**, Democratization and Revolution in USSR 1985-91, Brookings Institution Press, 1997, p. 448.

ները՝ ՀՅԴ, ԱԻՄ, ՍԻՄ, ՀՔԺՄ, ՀՀԿ։ Վերջիններս 1991թ. օգոստոսի 31-ին Երևանի Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի շրջանակներում պահանջում էին հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել հեղաշրջման օրերին տեղի ունեցածը։ Կուսակցություններն առաջարկում էին չսպասել մինչև սեպտեմբերի 21-ը, այլ, գործի դնելով ԳԽ մարտի 1-ի որոշումը՝ Արցախի հետ միասին Հայաստանը հռչակել անկախ պետություն։ Ի դեպ, այս միջոցառմամբ էլ Հայաստանում ուրվագծվեց 1990-94թթ. քաղաքական հարաբերակցությունը՝ իշխող ՀՀՇ-ին ընդդիմադիր կուսակցությունների ներկապնակը։ Հանրահավաքում հնչեցվում էին նաև մի շարք այլ պահանջներ, որ կարճ ժամանակում վերածվեցին Հանրապետության ներքաղաքական հակասությունների հիմնահարցերի. Արցախի անկախության ճանաչում կամ Հայաստանի հետ վերամիավորում, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի՝ Հայաստանին առնչվող կետերի, Հայաստանի խորհրդայնացման և ԽՍՀՄ ստեղծման մասին պայմանագրերի չեղարկում, Սահմանադիր ժողովի հրավիրում և այլն[44]։

ԽՍՀՄ-ում ԱԴՊԿ-ի հեղաշրջման փորձի օրերին հապճեպորեն պաշտոնական գնահատական հնչեցնելու պահանջ ներկայացնում էին ԱԻՄ-ը, ՀՅԴ-ն և ՀՀՇ-ին ընդդիմադիր մյուս կուսակցությունները[45]։ ՀՀՇ-ն և Հայաստանի ղեկավարությունը, այդուհանդերձ, նախընտրեց սպասողական դիրքորոշումը, ինչը հետագայում դրական գնահատվեց նույնիսկ գաղափարական հակառակորդների կողմից[46]։ Լևոն Տեր-Պետրոսյանը, որպես ԳԽ նախագահ, սառնասրտության կոչ էր հնչեցնում, որով ՀՀՇ-ն հրաժարվում էր կրել ԱԴՊԿ-ն հապշտապ կերպով դատապարտողի պատմուճանը՝ պնդելով, որ նման քայլով գուցե «հեղձուցիչ հետևանքներ» պարտադրվեին Հայաստանին։ Իրավամբ, պետական հեղաշրջման տապալված փորձը կարող էր և երկար ընթացք ունենալ՝ հաստատապես իր ծանրության տակ առնելով առաջին հերթին անկախությունների ձգտող փոքր պետությունները։ Ըստ այդմ՝ Հայաստանի չեզոքության ու ժողովրդավարության

---

[44] *Երկիր*, 3 սեպտեմբերի, 1991թ.։

[45] *Անկախություն*, 30 օգոստոսի, 1991թ.։

[46] **Ղազարյան Ռ.**, Հաշվետու եմ, Երևան, 2003թ., էջ 10։

պաշտպանության հայտարարություններով չգայթակղվելու որոշումը գուցե կանխարգելիչ նշանակություն ունենար՝ հեղաշրջման փորձի հաղթանակի պարագայում:

1991թ. օգոստոսի 26-ին, երբ արդեն հայտնի էր հեղաշրջման ձախողումը, ՀՀ ԳԽ նախագահության մի քանի անդամներ առաջարկեցին անհապաղ հռչակել Հայաստանի անկախությունը: Հատկանշական է, որ մինչև սահմանված օրը՝ 1991թ. սեպտեմբերի 21-ը, հանրաքվեի անցկացումը ՀՀ իշխանությունների կողմից հանրապետության անկախության հռչակումը պաշտպանում էին ապագա ԱԺՄ-ի հիմնադիրները, ինչպես Տիգրան Սարգսյանը, Դավիթ Վարդանյանը, այնպես էլ այն ժամանակ դեռևս կառավարության ղեկավար Վազգեն Մանուկյանը[47]: Ի վերջո, ընդունվեց փոխզիջումային մի տարբերակ. ՀՀ ԳԽ-ի կողմից Հայաստանի քաղաքացիներին ուղղված հայտարարություն-կոչ տարածվեց՝ խնդրելով սեպտեմբերի 21-ին նշանակված հանրաքվեի ժամանակ կողմ քվեարկել անկախությանը[48]: Օգոստոսյան իրադարձություններն այլևս ակնհայտ դարձրին, որ ԽՍՀՄ-ը անշեղորեն գնում է դեպի մայրամուտ:

Ժամանակային առումով վերադառնալով 1991թ. մարտ ամիսը՝ հարկ է արձանագրել, որ Հայաստանում ընթանում էր անկախության հարցով սեփական հանրաքվե անցկացնելու գործընթացի նախապատրաստությունը: Դրա ամբողջական իրացմանն էր միտված 1991թ. մարտի 4-ին կայացած հայաստանյան քաղաքական կազմակերպությունների խորհրդակցությունը: Մասնակցում էին Հայաստանի բոլոր ազդեցիկ կուսակցությունները՝ ՀՀՇ, ՀԿԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ, ԱԻՄ, ՀՀԿ և այլն: Հատկանշական է, որ խորհրդակցությանը միացել էին նաև ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ու ՀՀ ՄԽ նախագահ Վազգեն Մանուկյանը: Ըստ էության, բացի Կոմունիստական կուսակցությունից, մյուս բոլոր քաղաքական կազմակերպությունները առարկություններ չունեին Հայաստանում անկախության հարցով առանձին հանրաքվե անցկացնելու մոտեցմանը[49]: Այս փաստը կարելի է համարել

---

[47] *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր*, 16 (996), 31 օգոստոսի, 1991թ., էջ 16:

[48] Նույն տեղում, էջ 15-16:

[49] *Ազգ*, 6 մարտի, 1991թ.:

անկախության ճանապարհին ներհայաստանյան միջկուսակցական համերաշխության կամ կոնսենսուսի առաջին լրջագույն դրսևորումը:

Գործընթացն առարկայացավ հանրաքվեից երկուսուկես ամիս առաջ՝ 1991թ. հուլիսի 10-ին, երբ ՀՀ Գերագույն խորհրդում առաջատար հասարակական-քաղաքական կազմակերպությունները, որոնց թվում՝ ՀՀՇ, ՀՀԿ, ՀՌԱԿ, Ազգային-պահպանողական (ԱՊԿ), Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն (ՀՔԴՄ) կուսակցությունները և ԱԻՄ-ը, Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեի առթիվ հանդես եկան միացյալ հայտարարությամբ: Այն հայությանն ուղղված կոչ էր, որով այդ կազմակերպությունները, պահը եզակի գնահատելով, համազգային պայքարը տրամաբանական հանգրվանին հասցնելու վճռականությամբ, պատրաստակամություն էին հայտնում լիովին ներգրավվելու Հայաստանի Հանրապետությունում ազգային անկախ պետականություն հաստատելու գործընթացում: ՀՀՇ, ԱԻՄ, ՀՌԱԿ, ՀՀԿ, ՀՔԴՄ, ԱՊԿ կուսակցությունները շեշտում էին, որ ազգային զարգացումն ու բարգավաճումը ապահովելի էին սոսկ անկախ պետականության պայմաններում: «Ոչ» քվեարկությունը կուսակցությունները միանշանակորեն մերժելի էին համարում: Անկախության մերժումը համաժողովրդական հանրաքվեում, նրանց ըմբռնմամբ, աղետալի կլիներ, քանզի այդ պարագայում ողջ հանրապետությունն ու ժողովուրդը անխուսափելիորեն հարկադրված էին լինելու ապավինել օտարի ողորմածությանը[50]: Այդ իսկ պատճառով էլ միասնական դիրքորոշման հանգելով՝ Հայաստանի հիմնական քաղաքական դերակատարները քաջալերում էին ժողովրդին «այո» ասելու անկախությանը, որի ներքո հանդես էր գալիս նախնիների երազանքն ու գալիք սերնդի ազատ ու արժանապատիվ ապագան[51]:

Անկախության հռչակման հանդեպ ՀՀՇ-ի վերաբերմունքն աներկբա էր, ըստ որի՝ կայսրությունը փլվում էր և Հայաստանն ամեն գնով պիտի խուսափեր փլատակների տակ մնալուց: Կուսակցությունը բացատրում էր, որ իր նպատակը բնավ էլ միութենական իշխանությունների հետ առճակատման գնալը չէր: Որպես

---

[50] **Մանուկյան Վ.**, նշվ. աշխ., էջ. 137-38:

[51] *Հայաստանի Հանրապետություն*, 11 հուլիսի, 1991թ.:

առաջնայնություն՝ հատկանշվում էր Խորհրդային միության ու նրա սահմաններից դուրս գտնող պետությունների հետ առանձին, երկկողմ հարաբերությունների հաստատումը[52]: Անկախության նկատմամբ ՀՅԴ-ի զգուշավոր մոտեցումը զգալիորեն պայմանավորված էր արևմտյան հարևան Թուրքիայի հակահայ դիրքորոշմամբ, մասնավորապես՝ նոր ցեղասպանության մտահոգությամբ[53]: ՀՅԴ-ն ու նրա գաղափարակից ուժերը զգուշացնում էին, որ պանթուրքիզմի ծաղկմանը խանգարում էր միայն Խորհրդային Միության հզոր պետական մեքենան, և Հայաստանի անջատման պարագայում աննկարագրելի կլիներ պատուհասող վտանգը: Այս համատեքստում շրջանառության մեջ դրվեց այլ եզրույթ՝ «նեոպանթուրքիզմ», ըստ այդմ՝ Մեծ Թուրանի միասնական պետության ստեղծման գաղափարն այլևս կենսունակ չլինելով՝ տեղը զիջել էր թուրքալեզու ժողովուրդների ամբողջացման մեկ այլ համակարգի: Գաղափարը ենթադրում էր թուրքալեզու ժողովուրդների համար Եվրամիության նման մի կառույցի ստեղծումը[54]: ՀՅԴ-ի դիրքորոշումը ներկայացնում էր կուսակցության առաջնորդ Հրայր Մարուխյանը՝ շեշտելով, որ անկախության պահանջի համար պահը աննպաստ էր՝ հաշվի առնելով ռուսական աջակցության կարիքը[55]:

Ի դեպ, այդ շրջանում Հայաստանի անկախությունը հաճախ ասոցացվում էր հակառուսականության հետ՝ այդկերպ աղճատելով իրերի դրությունը: Եվ ահա բանավեճը նեղանում էր ռուսամետության ու ռուսատյացության, միայնակ անկախ պետականություն պահպանելու ընդունակության ու այդ շնորհից զրկված լինելու դարավոր բարդույթի միջև: Խնդիրն այն է, որ 1988-1990թթ. հաճախ էին հայ մտավորականության ներկայացուցիչները հրապարակավ արտահայտում իրենց զգուշավորությունը Ռուսաստանից կտրվելու առթիվ[56]: Եվ

---

[52] *Аргументы и факты*, 14, 1991.

[53] **Մանուկյան Վ.**, Գնացքից թռչելու ժամանակն է: Որն է մեր ճանապարհը, կզմ. Ա. Բլեյան, Երևան, «Արևիկ», 1990թ., էջ. 7-43:

[54] **Խուրշուդյան Լ.,** Հայկական հարցը, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, 1995թ., էջ 85:

[55] *Դրօշակ*, 7, 19 հուլիսի 1989թ.:

[56] **Սարգսյան Ա.**, Լևոն Տեր-Պետրոսյան՝ Հիմնադիր-Նախագահ Հայաստանի Հանրապետության, *Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ),* Երևան, 2006թ., էջ 665-709:

դա, հատկապես ժամանակային առանձնահատկությունները հաշվի առնելով, լիովին օրինաչափ էր: Միաժամանակ տրամաբանական էր նաև հնազանդության հասնող գերզգուշավորությանը տրվող հակափաստարկը՝ ինքնիշխանության ու ինքնուրույնության գերապատվությամբ[57]: Ի վերջո, միմյանց էին բախվում որևէ հովանավոր տերության աջակցությամբ զոյատևելու և ինքնուրույնաբար սեփական ապագան կառուցելու գաղափարական ըմբռնումները:

Հայաստանի անկախության հարցով հանրաքվեի նշանակման մասին ՀՀ ԳԽ որոշումը, ՀՀՇ-ի պատկերացմամբ, «ՀՀ անկախության մասին» հռչակագրի տրամաբանական շարունակությունն էր: Շեշտադրվում էր ոչ թե անկախության վերականգնման, այլ հաստատման փաստը, որն ի ցույց էր դնում Հայաստանի յուրահատուկ դրությունը՝ խուսանավելով Թուրքիայի հետ անխուսափելի թվացող տարածքային վեճերից: Կուսակցությունն անկախության հանրաքվեի հարցում հաջողությունը շաղկապում էր ինչպես իրավական հիմնավորվածությանը, այնպես էլ քաղաքական ու համաժողովրդական աջակցությանը[58]: Նկատելի է, որ ՀՀՇ-ն անկախությունն էր դիտում որպես ազգի համար կենսական անհրաժեշտություն: Կուսակցությունը համոզված էր, որ Խորհրդային Միությունը հայոց անկախությունը փոխարինել էր պարզագույն ինքնուրույնությամբ և այն սահմանող հիմնական սկզբունքներով, որոնք գործնական կիրառություն չէին ունեցել[59]: Ի դեպ, կուսակցությունը խիստ կարևորում էր «անկախություն» եզրույթի հետևողական կիրառումը՝ նպատակ հետապնդելով արմատավորել անկախության գաղափարը ժողովրդի գիտակցության մեջ[60]:

Գաղափարապես՝ ՀՅԴ-ի պայքարը հանուն «միացյալ Հայաստանի», միտված էր ամբողջական հայրենիքի ազատությանն ու անկախությանը: Հայ ազգի կենսական նպատակը կուսակցության կողմից հռչակվում էր Հայ դատը, որը երբևէ չէր կարող հանգել իր

---

[57] **Սիրադեղյան Վ.**, Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին: Որն է մեր ճանապարհը, կզմ. Աշոտ Բլեյան, Եր. Արևիկ, 1990թ., էջ. 86-92:

[58] *Հայաստանի Հանրապետություն*, 8 մայիսի, 1991թ.:

[59] **Մանուկյան Վ.**, Ելույթ Ազատության հրապարակում, 23 սեպտեմբերի, 1988թ.:

[60] **Մանուկյան Վ.,** նշվ. աշխ., էջ 26:

մասերին, ինչպես հայ ազգի անկախությունն ու ազատությունը՝ նրա մեկ մասի, օրինակ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության ազատությանն ու անկախությանը: Ճիշտ նույն ձևով էլ «միացյալ Հայաստանը» չէր կարող նշանակել նրա որևէ մեկ մասի (օրինակ՝ Արցախի) միացումը մեկ այլ մասին՝ Հայաստանի Հանրապետությանը: Հետևաբար, թեև Արցախն ու Հայաստանը արտահայտում էին Հայ դատը, առանց Հայրենիքի մյուս հատվածների, չէին կարող պարփակել հայ ազգի ամբողջ կենսանպատակը: Այդկերպ և եզրակացվում էր, որ Հայ դատի որևիցե մասը չէր կարող հակադրվել նրա մեկ այլ մասին, ինչպես Արցախը՝ Արևմտահայաստանին, Նախիջևանը՝ Ջավախքին և այլն: ՀՅԴ-ն, փաստորեն, Հայ դատի խնդրի լուծումը դիտարկում էր շղթայական իրադարձությունների համատեքստում՝ առաջնային համարելով «միացյալ Հայաստանի» կերտումը, այնուհետ՝ հավաքական անկախությունը[61]:

ՀՅԴ-ն Հայաստանի անկախությունն անմիջականորեն պայմանավորում էր Թուրքիայի բռնազավթած հայկական տարածքների վերադարձով[62]: Կուսակցության ընկալմամբ՝ առանց պատմական հողերի, անկախ ու լիիրավ ազատ Հայաստան լինել չէր կարող: Դրան հակառակ՝ ՀՀՇ-ն պատմական Հայաստանի հողերի վերադարձն ու միավորումը տվյալ պատմափուլում անիրագործելի էր համարում, ուստի և «միացյալ Հայաստանի» ու ԽՍՀՄ կազմում մնալու հարցերի առնչակցման ՀՅԴ-ի դիրքորոշումը ՀՀՇ-ն նույնացնում էր Կոմկուսի կեցվածքին[63]: ՀՀՇ-ն աննահանջ հակադրվում էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի չեղարկման պահանջով հանդես եկող կազմակերպություններին: Ըստ ՀՀՇ-ի՝ պետության հիմնադրման պատասխանատու պահին այդպիսի «արկածախնդրությունը» կարող էր սպառնալ Հայաստանի անվտանգությանը[64]: Այս կուսակցությունն առժամանակ անիրատեսական էր համարում պահանջատիրության հարցով Հայաստանի պետական քաղաքականության ծանրաբեռնումը՝ շեշտելով, որ նորաստեղծ պետությունն իր վտիտ ուսերին այդպիսի

---

[61] *Ազատամարտ*, թիվ 24, 18 հունիսի, 1992թ.:
[62] *Երկիր*, 31 օգոստոսի, 1991թ.:
[63] *Հայք*, 20 մարտի, 1991թ.:
[64] *Հայք*, 19 մարտի, 1991թ.:

ծանր բեռ վերցնելու ունակություն և իրավունք չուներ։ Պահանջատիրությունը համարելով կայսրության կապանքներում արգելափակվելու զսպաշապիկ՝ կուսակցությունը օրվա խնդիրը հռչակում էր անկախության կերտումը, իսկ դրա ապագան՝ առնչակցում պետության հաջողությանն ու հզորությանը[65]։

Հայաստանի անկախության հռչակման հանդեպ վերապահումներ ունեցող քաղաքական ուժերի հիմնական փաստարկներից մեկը վերաբերում էր տնտեսության կազմակերպմանը։ Գերազանցապես Կոմկուսի դիրքորոշման առանցքը կազմող այս հիմնավորմամբ՝ ԽՍՀՄ-ը շարունակելու էր գոյատևել, որի տնտեսական համակարգից զատվելով՝ Հայաստանը կարող էր աղետի առաջ կանգնել։ Հնչեցված մտահոգություններից հաջորդի հեղինակը ՀՅԴ-ն էր, որը բարձրացնում էր Հայաստանի և հարևան պետությունների միջև առկա թշնամական հարաբերությունների հարցը։ Այս մտայնության թերևս ամենակարևոր կռվանն առնչվում էր Հայ դատին ու պահանջատիրությանը՝ իբրև հայ ժողովրդի կենսական խնդիր, որի լուծումը հնարավոր էր բացառապես հզոր տերության կազմում[66]։ Դրան հակառակ՝ ՀՀՇ-ն ԽՍՀՄ փլուզումն անխուսափելի էր համարում, բայցև շեշտում անկախ պետության կարգավիճակով մյուս հանրապետությունների հետ ազատ տնտեսական հարաբերություններ կառուցելու հեռանկարը։ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ունեցած հակասությունները, որոնք թշնամանքի էին վերաճել, ՀՀՇ-ի ըմբռնմամբ՝ անցողիկ էին՝ շեշտելով, որ հողային պահանջատիրությունը նման իրավիճակում չէր կարող գերակայել անկախության նկատմամբ, մինչդեռ հարևանների հետ հարաբերությունների բարիդրացիականացումն աստիճանաբար ավելի իրականանալի էր համարում։ Կուսակցության ելակետն այնպիսին էր, որ յուրաքանչյուր ժողովրդի համար անկախ պետականությունը ազգի առջև ծառացած խնդիրները քայլ առ քայլ հաղթահարելու հնարավորություն ընձեռող գերազույն արժեք էր[67]։

---

[65] **Եգորյան Է.**, Տեր կանգնենք մեր վաղվա օրվան, Եր., Նաիրի, 2003թ., էջ 73։

[66] **Սարգսյան Ա.**, ՀՀՇ պատմությունը, ՄԱՍ II (հատուկ մաս) http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=160:---i&catid=53:2011-01-17-14-37-42&Itemid=66 (14.02.2017):

[67] Նույն տեղում։

ՀՀՇ-ն Հայաստանի ինքնիշխանության ընդլայնման և պատեհ առիթի դեպքում ԽՍՀՄ-ից անջատվելու լավագույն ճանապարհը համարում էր տնտեսության ազատականացումը: Համադաշնության տարբերակը կուսակցությունը նպատակահարմար չէր համարում՝ պնդելով, որ պետության կազմավորման այդպիսի ձևն անկայուն է: ԽՍՀՄ-ի ապագան ՀՀՇ-ն հրաժարվում էր տեսնել դրական լույսի ներքո՝ համոզված, որ աշխարհաքաղաքական այդպիսի պայմաններում և հատկապես տնտեսական նման հնարավորություններով ԽՍՀՄ-ը գոյատևման շանս չուներ: Մերժվում էր նաև մտայնությունը, թե ԽՍՀՄ-ի կազմում մնալով՝ Հայաստանի տնտեսությունը կարող էր զարգանալ: Մատնանշելով ԽՍՀՄ-ի տնտեսության անկումային ցուցանիշները՝ քաղաքական այս թևի ներկայացուցիչները Միության անկումն անխուսափելի էին համարում և առաջարկում նոր հարվածներից խուսափելու համար անվարան գնալ անկախության[68]:

Անկախության հիմնահարցի բուռն բանավեճին մասնակցում էին նաև այլ կուսակցություններ, որոնց շարքում առավել արմատական էր ԱԻՄ-ի դիրքորոշումը՝ դժգոհելով, որ հանրաքվեն ուշացումով է անցկացվում: Կուսակցությունը կոչ էր անում ժողովրդին օգտվել ընձեռված հնարավորությունից և գրկաբաց ընդունել անկախությունը[69]: Ի դեպ, Լեռնային Ղարաբաղի հետ միասին Հայաստանի անկախությանը հասնելու առաջարկով 1991թ. մայիսին հանդես եկան ԱԻՄ-ը և ՍԻՄ-ը: Առաջարկվում էր Հանրապետության մայր օրենքում կատարել պետության սահմանների փոփոխություններ՝ վարչատարածքային կազմում ընդգրկելով Շահումյանը, Գետաշենն ու ԼՂԻՄ-ը: Միաժամանակ, այդ կուսակցությունները ցանկանում էին ՄԱԿ-ին պաշտոնական պահանջագիր հղել, որպեսզի Պարսից ծոցում գտնվող խաղաղարար զորքերը տեղաբաշխվեին Հայաստանի նոր սահմանների երկայնքով և ապահովեին վերամիավորված Հայաստանի անկախությունը: Ի դեպ, ՍԻՄ-ը անկախության նվաճմամբ չէր սահմանափակվում՝ այն համարելով ազգային հրատապ խնդիրների լուծման համար ընդամենը միջոց և ոչինչ ավելի[70]:

---

[68] **Մանուկյան Վ.**, Գնացքից թռչելու ժամանակն է, 1990թ.:

[69] *Հայաստանի Հանրապետություն*, 11 հուլիսի, 1991թ.:

[70] *Հայք*, 14 մայիսի, 1991թ.:

Ավանդական մեկ այլ քաղաքական կազմակերպություն՝ Ռամկավար ազատական կուսակցությունը, առաջնահերթ էր համարում ազատության ու անկախության հաստատումը։ ՌԱԿ-ը լիակատար հավանություն էր տալիս օրվա իշխանությունների՝ անկախության հասնելու ուղղությամբ ձեռնարկված ջանքերին։ 1991թ. սեպտեմբերի 21-ին կուսակցությունը վերաբերվում էր որպես «մտասևեռման հանգրվանի», որը պիտի առանձնանար ժողովրդի կամքի իրական արտահայտվածությամբ՝ որպես անկախության գործընթացը շարունակելու պարտադիր պայման[71]։ Իսկ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության դիրքորոշումն անկախության հանրաքվեի հարցում աներկբա էր՝ սեփական քաղաքական կարգավիճակը ինքնուրույնաբար որոշելու բարձրագույն իրավունքը դիտելով իբրև առաջնահերթություն[72]։

Հայաստանի անկախության հանրաքվեի շրջանում ՀՀՇ-ից անջատված և արդեն փաստացի ստեղծված ԱԺՄ-ն այս հարցում հիմնականում պահպանել էր սկզբունքային դիրքորոշումը։ Պարզապես կուսակցությունը հակվել էր այն կարծիքին, որ անկախությունը ոչ թե գործընթացի վերջնակետն էր, այլ սոսկ միջանկյալ օղակը՝ «համաշխարհային ազգ» հայեցակարգի շրջանակներում[73]։ ՀՀԿ-ն էլ անկախ պետականության գոյությունը համարում էր հայկական վերածննդի անհրաժեշտ պայման, իսկ սեպտեմբերի 21-ի հանրաքվեն՝ որպես եզակի պատեհություն։ Իսկ ՀՔԴՄ-ն անկախության գործընթացի նկատմամբ ներհայաստանյան միասնականության ցուցիչը համարում էր տարբեր հակասություններ ունեցող կուսակցությունների համախմբումը[74]։

Արմատապես առանձնանում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության դիրքորոշումը, որը կտրուկ դեմ էր ԽՍՀՄ-ից դուրս գալու և անկախություն հռչակելու ՀՀՇ-ի քաղաքականությանը։ Մերժելով «սեպտեմբերի 21-ի» խորհուրդը՝ ՀԿԿ-ն նաև չէր պատկերացնում Հայաստանի գոյության հնարավորությունը դրանից

---

[71] Նույն տեղում։

[72] *Հայաստանի Հանրապետություն*, 11 հուլիսի, 1991թ.։

[73] *Հայաստանի Հանրապետություն*, 16 դեկտեմբերի, 1990թ.։

[74] *Հայաստանի Հանրապետություն*, 11 հուլիսի, 1991թ.։

հետո, հետևապես մերժում էր անկախության հասնելու գաղափարն ընդհանրապես[75]: Ի տարբերություն դրա՝ ՀՅԴ-ն հայտարարում էր իր վերապահումները՝ ձգտելով ոչ թե հռչակագրային, այլ գործնական անկախության: Այս հարցում ՀՀՇ-ի ու ՀՅԴ-ի դիրքորոշումների տարբերությունը հակասությունների մի նոր ալիք բերեց իր հետ, երբ առաջինը քննադատում էր երկրորդին «անկախությանը դեմ լինելու» մեջ, իսկ երկրորդը՝ առաջինին՝ «անծրագիր գործողությունների»[76]: Միաժամանակ պետք է ընդգծել, որ մասամբ նաև օգոստոսյան դավադրությամբ պայմանավորված՝ ՀՅԴ-ն, ի վերջո, դրականորեն հակվեց անկախության հռչակման հանդեպ: Ըստ այդմ՝ սեպտեմբերի 21-ի պատմական իրադարձությանն իր մասնակցությունը բերելու միտված քայլ էր ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանի հայաստանյան այցն այդ օրերին: Մարուխյանը անկախության օգտին տրված բարձր աջակցությունը համարում էր կարևոր մեկնակետ հայ ժողովրդի համար՝ անկախության գործընթացն ավելի ապահով ճանապարհով տանելու համար[77]:

Հայաստանի մի շարք քաղաքական կազմակերպություններ՝ ԱԻՄ, ՀԵՄ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ՍԻՄ, ՀՅԴ, ՀՔԴՄ, ՀՀՇ, մեկտեղելով իրենց ուժերն ու ջանքերը, ստեղծել էին անկախության հանրաքվեի համակարգիչ խորհուրդ: Վերջինիս ստեղծումը հետապնդում էր Անկախության հանրաքվեի հնարավորինս բարձր դրական արդյունքների ապահովման նպատակը: Անկախությունից զրկված լինելը համարելով մեծագույն դժբախտություն՝ հայաստանյան քաղաքական ուժերը կոչ էին անում քաղաքացիներին ինքնորոշման ճանապահով վերականգնելու կորցրած պետականությունը: Այդ նպատակով էլ հիմնվեց անկախության հանրաքվեի համակարգիչ խորհուրդը[78]: Վերջինիս գործունեությունը, սակայն, չպետք է գերագնահատել՝ հաշվի առնելով այն ժամանակ առկա բազմակուսակցական համակարգի առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ հորիզոնական հարաբերություններով

---

[75] *Հայք,* 21 հունիսի, 1991թ.:

[76] *Հայաստանի Հանրապետություն*, 13 հուլիսի, 1991թ.:

[77] *Երկիր*, 20 սեպտեմբերի, 1991թ.:

[78] *Անկախություն*, 23 օգոստոսի, 1991թ.:

կուսակցությունները լուծում էին սոսկ հաղորդակցության ու փոխադարձ աջակցության խնդիրները, մինչդեռ սոցիալական խմբերի ու պետության ուղղահայաց կապի ապահովման գործում, ըստ էության, անմասն էին[79]:

1991թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ անկախության հանրաքվեն, որի արդյունքներով՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 2 մլն 163 հազար 967 քաղաքացիներից քվեարկությանը մասնակցել էր 2.056.758 մարդ՝ մոտ 95.5 տոկոս: «Այո» քվեարկեցին 2.042.627 քաղաքացիներ՝ (94.39%), «ոչ»՝ 10.002 (0.46%): Անվավեր էին ճանաչվել 4.129 քվեարթերթիկներ (0.19%): Երկու օր անց՝ սեպտեմբերի 23-ին, ՀՀ Գերագույն խորհուրդը կայացրեց պատմական որոշում. «Հավատարիմ մնալով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների և ազգերի ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ունենալով 1991թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն»[80]:

Իրադարձությունների զարգացումը հետագա 26 տարիներին ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը եղավ այն հիմնահարցը, որի վերաբերյալ հայաստանյան կուսակցությունները՝ չնայած սկզբնական որոշ տարաձայնություններին, ունեցան միասնական դիրքորոշում:

Եզրակացություն

Հայաստանի քաղաքական կազմակերպություններն անկախության վերականգնման շրջանում պայմանականորեն բաժանված էին երեք խմբերի: Առաջինում էին ՀՀԿ-ն, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, որոնք անվարան անկախություն էին պահանջում, իսկ երկրորդը գլխավորում էր ՀՅԴ-ն,

---

[79] **Lawson K.**, Political Parties and Linkage, New Haven, CT, Yale University Press, 1980, p. 187.

[80] *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր*, 18 (998), 30 սեպտեմբերի, 1991թ., էջ 21:

որն անկախությունը տեսնում էր միայն պատմական Հայաստանի հողերի վերամիավորմամբ: Երրորդը՝ ՀՀՇ-ն, անկախության հասնելն առնչակցում էր «հանդարտ ընթացքի ու առճակատումներից խուսանավելու» քաղաքականությանը: Հակասություններն ու անկախության գործընթացի՝ հակոտնյա ճանապարհային քարտեզ-ները 1988-91թթ. ակտիվ հակասության մեջ էին միմյանց հետ: Միաժամանակ, վերոնշյալ բոլոր ուժերն էլ անվերապահորեն էին վերաբերվում անկախության գաղափարին՝ դրան հասնելու իդեալա-կան ճանապարհը տեսնելով սեփական ծրագրերի ու տեսլականի համատեքստում: Կարևոր է, որ մարտավարական հակասությունները 1991թ. սեպտեմբերի 21-ից առաջ լուսանցք մղվեցին՝ զիջելով անկախությունը լիարժեքորեն ընդունելու նախընտրությանը: 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեին գրեթե բոլոր կուսակցությունները դրականորեն էին վերաբերվում: Բացառություն էր միայն ՀԿԿ-ն, որը չէր պատկերացնում Հայաստանի գոյությունը Ռուսաստանից անկախ: Հայաստանի անկախության ձեռք բերման գործում առանցքային դերակատարություն ունեցան գրեթե բոլոր քաղաքական կազմակեր-պությունները՝ յուրօրինակ միջկուսակցական համերաշխությամբ առաջ տանելով գործընթացը: Անկախության հանդեպ հայաստանյան քաղաքական ուժերի նախնական վերապահումներն ու զգուշավորու-թյունը 1990թ. խորհրդարանական ընտրություններում ՀՀՇ-ի փաստա-ցի հաղթանակով նկատելիորեն հաղթահարվեց: 1990թ. իշխանափո-խությունը այլևս ակնհայտ դարձրեց, որ Հայաստանը բռնել էր անկախության և ԽՍՀՄ կազմից դուրս գալու ուղին: Այսպիսով, 1991թ. անկախության հարցի առնչությամբ հայաստանյան միջկուսակցական կոնսենսուսը բացառիկ երևույթ էր, որ պակաս նշանակություն չունեցավ անկախության ձեռքբերման հաջող ընթացքի ճանապարհին:

Formation of Armenian Political Parties in the Context of Restoration of Independence

NJZDEH HOVSEPYAN
Yerevan State University

The process of the restoration of independence along with Nagorno-Karabakh's self-determination issue was the first major political problem the Armenian political parties faced. The article examines the formation of a multiparty system in Armenia in the context of that process. Armenian political parties took their part in the process while having principle disagreements concerning the alternatives of road, timeline and means of achieving the independence. Definitely accepting the necessity of independence, Armenian political parties were suggesting completely different roadmaps of handling the process. Simultaneously, these disagreements led to inter-party ideological debate. Thus, this article has an objective to discuss the debate by presenting comprehensive attitude of parties towards independence. It is important to identify the role of political parties and the fight between them in the process of independence in terms of studying the history of the Third Republic and the formation of a multi-party system in Armenia. With the approaching referendum on independence, the stances of the Armenian political forces were crystallized and finally, on the eve of the referendum, all Armenian political parties came to an agreement.